

375  

---

M-26

06 APR 2010

ԱՍԽՀ

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՎՈՄԱՏ

ՈՒՍՈՒՄՆԱ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԵԿՏՈՐ

ՏԱՐՐԱԿԱՆ

ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ

ԴՊՐՈՑԻ

ԾՐԱԳՐԵՐ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТ  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

(I—IV ԽՄԲԱԿՆԵՐ)

375  
ԱՂ-26

ՋԵՐՆԵՇՐ—ԲԱԿՈՒ—1933 թ.

1053750

մ-26

53.786

Տարական դպրոցի հասարակագիտության ծրագիրը կազմել են՝  
 րնկ. Լեւոնբոյը յեվ Մամայեվը: Ծրագրի հիմնում ընդունված է  
 1932-33 ուս. տարվա սկզբում ՌՍՖՍՀ ԼԺԿ ՈւՄՍ-ի կողմից պա-  
 տասած սեկսի վարյանքը: Մտնում են մի շարք փոփոխություն-  
 քեր յեվ ավելացված է տեղագրական նյութը: Ծրագրի ուսսական  
 սեկսը նայել յեվ խմբագրել է րնկ. Ազնաուրովը:

Ծրագիրը հաստատված է ԱՍԽՀ ԼԺԿ կոլլեգիայի կողմից  
 1932 թ. նոյեմբերի 20-ին:

34-Ա  
ՍՁ 858

ՏԱՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԱՌԱՋԻՆ ԽՄԲԱԿ

(76 ժ.Ա.Մ)



I Թ Ե Մ Ա — ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿՆԵՐ (8 ժամ)

8 մինչև 10 տարեկան յերեխաներն ունեն իրենց՝ հոկտեմբերիկնե-  
 րի կազմակերպությունը: Դպրոցի յուրաքանչյուր խմբակում հոկտեմ-  
 բերիկներ պետք է լինեն: Հոկտեմբերիկներն՝ ուսման և աշխատանքի  
 մեջ պետք է լինեն ամենալավ որինակն իրենց ընկերների համար:  
 Հոկտեմբերիկները — ամբողջ յերկրի աշխատավորության յերեխաների  
 ընկերներն են: Բոլոր դպրոցականները հոկտեմբերիկներին նման պետք  
 է ամբողջ աշխարհի աշխատավորության յերեխաների ընկերները լի-  
 նեն:

Հոկտեմբերիկները կազմակերպված են աստղիկներում: Աստղիկնե-  
 րը միանում են հոկտեմբերիկյան խմբերում: Աստղիկների համար ա-  
 ոաջնորդներ տալիս են պիտաներական կոլլեկտիվները: Ի՞նչով են զբաղ-  
 վում յերեխաները հոկտեմբերիկների խմբերում:

Հոկտեմբերիկները դպրոցի բոլոր յերեխաներին զբաղում են պայ-  
 քաբի հանուն ուսուցման, հանուն դպրոցական կարգ ու կանոնի, հա-  
 նուն դպրոցական գիտակցական կարգապահության: Հոկտեմբերիկնե-  
 րը յերեխաներին զբաղում են պայքարի հանուն ընդհանուր պարտա-  
 դիր ուսման, մտահոգվում են, վոր դպրոցական հասակ ունեցող բոլոր  
 յերեխաները սովորեն դպրոցում, հաճախեն կանոնավոր, հոգ տանեն  
 չունենոր յերեխաների սգնություն համար (վտանամաններով, հագուս-  
 տով):

Յերեխաների կազմակերպությունը հոկտեմբերիկներ անունն է  
 կրում ի պատիվ Հոկտեմբերյան հեղափոխության:

II Թ Ե Մ Ա — ԻՆՉՈՒ Ե ՏՈՆՎՈՒՄ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈ-  
 ԽՈՒԹՅՈՒՆԸ (10 ժամ)

Նախահեղափոխական շրջանի բանվորի և չքավոր գյուղացու աշ-  
 խատանքի և կյանքի ցայտուն պատկերները որինակներին հիման  
 վրա ցույց տալ նրանց կարիքներն ու հարստահարումն անցյալում,  
 նկարագրել աշխատավորների յերեխաների դրությունը, մարդկության  
 մեծամասնության համար ուսման բացակայությունը: Բացատրել, վոր  
 բանվորներն ու գյուղացիները պետք է աշխատեյին կապիտալիստնե-

Պատասխանատու խմբագիր՝ Ա. Պանդիկյան  
 Տեխ. խմբագիր՝ Կ. Թաղանյան

բի և կալվածատերերի համար, վորովհետև ֆաբրիկաները, գործարանները, մեքենաները, հողը կապիտալիստների և կալվածատերերի սեփականությունը են: Որինականը բերել պորտաբույծների կյանքից՝ կապիտալիստի, կալվածատիրոջ, կուլակի, տերտերի, մուլլայի:

Նախահեղափոխական շրջանում տեղի ունեցած բանվորների (գործադու) և գյուղացիների (կալվածատերերի ազարակների ավերման) պայքարի ցայտուն պատկերներով և որինականերով, առանձնապես հոկտեմբերյան հեղափոխության մարտերի որինականերով բացատրել, վոր բանվորներն ու գյուղացիները պայքար են մղել հարստահարիչների դեմ, վոր այդ պայքարում բանվորներն առաջից ելին գնում և իրենց հետևից տանում ելին գյուղացիությանը, վոր պայքարը ղեկավարում էր կոմունիստական կուսակցությունը Վ. Ի. Լենինի գլխավորությամբ:

Բացատրել, վոր 1917 թվին բանվորներն ու գյուղացիները Լենինյան կուսակցության ղեկավարությամբ հաղթանակել են, արտաքսել կապիտալիստներին և կալվածատերերին, նրանցից խլել են ֆաբրիկաները, գործարաններն ու հողը և իրենք են գարձել ամբողջ յրկրի տերը:

Բազմի (կամ տեղական) խորհրդի աշխատանքի որինակով բացատրել, վոր բանվորներն ու գյուղացիները յերկիրը կառավարելու համար ստեղծել են Սորհո ըզներ, վորոնք կարգադրություն են անում ֆաբրիկաներին, գործարաններին, հողին: Սորհրդային յերկրում այլևս հարստահարում չկա և դրա համար ել Հոկտեմբերյան հեղափոխության տարեդարձը ԽՍՀՄ — բոլոր աշխատավորության ամենամեծ տոնն է, վորի տոնակատարմանը մասնակցում են նաև յերեխաները: Տալ Հ. կ-տեմբերյան հանդեսներին յերեխաների մասնակցելու ձևերը:

III Թ Ե մ ա — ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՅԵՐԿՐՈՒՄ (14 ժամ)

(Գյուղական դպրոցում յերրորդ թեման մշակվում է «Գյուղացիների աշխատանքը կոխողում»):

Բացատրել, թե ով է բանվոր կոչվում: Փաբրիկաներում, գործարաններում, հանքերում, յերեկաթուղիներում աշխատող բանվորները:

Մտտակա արտադրության որինակի հիման վրա, բերել որինակներ ֆաբրիկա-գործարանային արտադրանքի և այն նյութերի, վորոնցից նա պատրաստվում է (հումք): Բացատրել, վոր ֆաբրիկայում աշխատում են կոլեկտիվորեն:

Յուրաքանչյուր մի բանվոր ունի իր առաջադրանքը (յերեխաներին ծանոթ արհեստի որինակի հիման վրա): Մեկի աշխատանքը կախում ունի մյուսի աշխատանքից: Աշխատանքը կատարելու համար բանվորները կազմակերպվում են բրիգադներում: Լավ բրիգադաները — հարվածային բրիգադներն են: Լավ բանվորները — հարվածայիններն են: Փաբրիկայի ընդհանուր աշխատանքը միացնում է բանվորներին:

Յերեխաներին ծանոթ արտադրության ընագավաններից բերել մեքենաների որինակներ և բացատրել, վոր ֆաբրիկաներում աշխատանքը կատարվում է մեքենաների ոգնությամբ: Մեքենաները թեթևացնում են բանվորների աշխատանքը, հնարավորություն են տալիս կարճ

ժամանակում պատրաստել շատ, լավ և եժան ապրանքներ, քան ձեռքի աշխատանքը: Յերեխաներին ծանոթ աշխատանքի ընագավանից մեքենային և ձեռքի աշխատանքի համեմատության որինակներ բերել: Վորպեսզի կարողանալ մեքենաներ պատրաստել և նրանց ղեկավարել, պետք է սովորել: Այդ պարզաբանել յերեխաներին ծանոթ մասնագիտության որինակի հիման վրա:

Որինակներով պարզել, թե ինչ է արտադրվում գյուղատնտեսության մեջ (հաճար, ցորեն, ճակնդեղ, բամբակ, բանջարեղեն և այլը): Պարզել գյուղատնտեսական աշխատանքի հիմնական ձևերը. հերկել, ցանել, հնձել: Բացատրել, վոր մինչև հեղափոխությունը բոլոր գյուղացիներն աշխատել են յուրաքանչյուրն իր հողամասի վրա և վոր միայն Սորհուրդների որոք, բանվորների ոգնությամբ, գյուղացիները կարողացել են միանալ կոլխոզում կոլեկտիվ աշխատանքի համար, գործադրել մեքենաները: (Այս թեմայի վերջին պարբերությունը տրված է միայն քաղաքի դպրոցի համար: Գյուղական դպրոցում այս պարբերությունը մտցվում է «Գյուղացու աշխատանքը կոխողում» թեմայի սկզբից):

IV Թ Ե մ ա — Վ. Ի. ԼԵՆԻՆԸ — ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴ (3 ժամ)

Վ. Ի. Լենինի մինչ հեղափոխության գործնությունից վերցրած փաստերի և որինակների հիման վրա յերեխաներին բացատրել, թե կոմունիստներն ինչպես են ղեկավարել բանվորների և գյուղացիների պայքարը: Յույց տալ Լենինի հետապնդվելը կապիտալիստների և կալվածատերերի կողմից: Որինակներ բերել Լենինյան ղեկավարությունից Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ: Լենինը — Սորհրդային իշխանության կազմակերպիչն ու առաջնորդը, բանվորների ու գյուղացիների լավ բարեկամը: Թշնամիների փորձերը 1918 թ. սպանել Լենինին: Լենինի մահը — մեծագույն կորուստը աշխատավորների համար: Լենինը թողել է պատգամներ, վորոնց աշխատավորությունը կատարում է Լենինյան կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ: Յերեխաներն ուսումնասիրում են Լենինի պատգամները և մասնակցում են նրա կատարմանը: Լենինը պատվիրել է բանվորներին և գյուղացիներին ամուր դաշինքով պայքարել հարստահարողների դեմ՝ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ և նոր կյանք կառուցել, ուր բոլորն են աշխատելու և վորտեղ հարստահարություն չի լինելու: Լենինը յերեխաներին պատվիրել է իրենց ուսումով ոգնել մեծերին — բանվորներին ու գյուղացիներին պայքարելու հարստահարիչների դեմ և նոր կյանք կառուցել: Բանվորների և գյուղացիների պայքարում և աշխատանքում, յերեխաների ցույց տված մասնակցության որինակներ բերել:

V Թ Ե մ ա. ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՈԼԽՈՋՈՒՄ (16 ժամ)

(Գյուղական դպրոցում այս թեման մշակվում է վորպես յերրորդ թեմա, իսկ հինգերորդը՝ անցնվում է «Բանվորների աշխատանքը խորհրդային յերկրում»): Գյուղական դպրոցի համար «Գյուղացու աշխա-

4  
59092-66  
ՄԵՏ ԱՍՏ ԳՐԱԿԱՐԻ  
ԴՅՈՒՄԵՆ  
ZUUN-Արմ. ССР  
Ս. Ա. ՄԵՇԿԻՆԻՆ

տանքը կոլխոզում» թեմայի սկիզբը պետք է փոխադրել «Բանվորնե-  
րի աշխատանքը յերկրում» թեմայի վերջին պարբերությունը:

Սոսակա կոլխոզի կյանքից վերցրած որինակների հիման վրա (խակ քաղաքի դպրոցներում ուսուցչի բերած որինակների հիման վրա), բացատրել, վոր գյուղացիները կոլխոզում միանալով հողից ոգտվում են միասին, ունենում են ընդհանուր գործիքներ ու մեքենաներ, ընդհանուր աշխատավոր անասուններ ու տնտեսական շենքեր: Կոլխոզում գյուղացիները բանվորների ֆաբրիկայում կատարած աշխատանքի որինակով, աշխատում են կոլլեկտիվորեն: Յուրաքանչյուր կոլխոզնիկ ունի իր առաջադրությունը (որինակներ բերել յերեխաներին ծանոթ և հասկանալի արհեստներից և աշխատանքի ձևերից): Որինակով բացատրել, վոր մի կոլխոզնիկի աշխատանքը կախված է մյուսից: Բրեզդաները կոլխոզում: Հարվածային բրեզդաներ: Հավազույն կոլխոզնիկները—հարվածայիններն են: Ով լավ և շատ է աշխատում նա շատ է ստանում:

Ընդհանուր աշխատանքը կոլխոզում միացնում է գյուղացիներին և հնարավորություն է տալիս մեքենաներ գործադրել: Ընդհանուր աշխատանք պահանջող մեքենաների որինակներ բերել, տրակտոր, կալսող մեքենա և ուրիշներ: Մեքենաները թեթևացնում են գյուղացիներին աշխատանքը և հնարավորություն են տալիս մեծ քանակությամբ բերք ձեռք բերել: Որինակներով բացատրել կոլխոզային աշխատանքի առավելություններն անհատական աշխատանքի նկատմամբ:

Կոլխոզում գյուղացիները վերջնականապես ազատվում են կուլակների շահագործումից: Կուլակները պայքարում են կոլխոզների դեմ: Բերել կուլակային պայքարի որինակներ: Կուլակներին ոգնում են տերտերները և մոլլաները:

Փաբրիկաների և գործարանների բանվորները ղեկավարում և ոգնում են կոլխոզնիկներին պայքարելու կուլակների դեմ: Կուլակների հողը, մեքենաները և մեծ աները խլում են և հանձնում կոլխոզներին: Կուլակներին, տերտերներին և մոլլաներին կոլխոզներում չեն ընդունում:

## VI Թ Ե մ ա. — ԲԱՆՎՈՐՆԵՐՆ ՈՒ ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵՋ ԸՆԳՎԱՆՈՒՐ ԽՆԳԻՐՆԵՐ ՈՒՆԵՆ (12 ժամ)

Բանվորները ֆաբրիկաներում և գործարաններում գյուղի համար մեքենաներ ու ապրանքներ են պատրաստում, կոլխոզնիկներին ոգնելու համար աշխատողներ են ուղարկում: Կոլխոզնիկներն արտադրում են հումք ֆաբրիկաների և գործարանների համար՝ նույնպես և կենսամթերքներ: Բանվորներն ու գյուղացիներն աշխատում են ամուր գաշինքով: Այդ գաշինքում ղեկավարները հանդիսանում են բանվորները, վորպես հարստահարողների դեմ մղած պայքարում ավելի փորձվածներ և միաձուլվածներ: Բանվորներն ու գյուղացիները միմիանց ոգնելով նոր կյանք են կառուցում, վարտեղ հարստահարում չի լինելու: Փաբրիկաների, գործարանների և կոլխոզների յեկամուտներն առաջվա նման չեն գնում կապիտալիստների և կալվածատերերի գրպանը՝ նրանց հարստացնելու համար, այլ գնում են աշխատավորները զբոսնում ընդ ընդ լավելուն: Կառուցվում են նոր ֆաբրիկաներ ու գործարաններ, արտա-

դրվում են գյուղատնտեսական մեքենաներ, կառուցվում են նոր տներ, աղումըներ, դպրոցներ, հանրային ճաշարաններ, մսուրներ, մանկահրապարակներ: Աճում է բանվորների աշխատավարձը և կոլխոզնիկների յեկամուտը: Լայն կերպով զարգանում է տերտերների և մոլլաների կրոնական խաբեբայությունից ազատող լուսավորությունը՝ յերեխաների և մեծերի համար:

## VII. Թ Ե մ ա. — ՈՒՐԻՇ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ (8 ժամ)

Մայիս 1-ի տոնակատարությունն նախապատրաստման նյութի հիման վրա բացատրել, վոր ուրիշ յերկրներում այժմ էլ ֆաբրիկաների, գործարանների, մեքենաների, հողի տերերը՝ հանդիսանում են կապիտալիստներն ու կալվածատերերը, վորոնք և հարստահարում են բանվորներին ու գյուղացիներին: Բերել արտասահմանյան բանվորների և գյուղացիների ժամանակակից պայքարի որինակներ: Բացատրել, վոր բոլոր յերկրներում բանվորների և գյուղացիների նպատակները միատեսակ են: Բացատրել մայիս 1-ի միջազգային որվա նշանակությունը և որինակներով ցույց տալ, թե այդ որն ինչպես է առնվում մեր յերկրում և արտասահմանում:

# ՅԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԱԿ

(76 ժ.Ա.Մ)

## Թ Ե մ ա. — ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՎԵԼԸ

(12 ժամ)

Քաղաքային կամ գյուղական խորհրդի աշխատանքի որինակներով բացատրել, վոր կապիտալիստների և կալվածատերերի իշխանությունը՝ տապալելուց հետո մեզ մոտ, ամբողջ յերկիրը կառավարում են խորհուրդները: Բացատրել, վոր առաջ յերկիրը կառավարում էին կապիտալիստները, կալվածատերերը և բեգերը ցարի գլխավորությունը: Ցարին ծառայում էին չինովնիկները, վոստիկանները, տերտերները և մուլաները: Ցարական իշխանության ծառաների կողմից բանվորների և գյուղացիների հարստանարման որինակներ բերել՝ դատապարտումն առանց դատի և դատարանի, բանտ, արտաքսում և տաժանակիր աշխատանք, բանվորն ըի և գյուղացիների իրավազրկություն, կրոնական խաբեբայություն լուսավորության տեղ: Բացատրել, վոր խորհուրդները բանվորների և գյուղացիների իշխանությունն որդաններն են, վորտեղ ղեկավարությունը պատկանում է բանվոր դասակարգին: Հոկտեմբերյան հեղափոխության և Ադրբեջանի 1920 թ. Ապրիլյան հեղափոխության պատկերներով ցույց տալ խորհրդային իշխանություն սահմանելու համար մղած պայքարը և կոմունիստների ղեկավարությունն այդ պայքարում:

Բացատրել, վոր խորհուրդների իշխանությունը բոլոր իրավունքները տրամադրել է աշխատավորներին և իրավազրկել է շահագործողներին: Որինակներով ցույց տալ բանվորների և գյուղացիների խորհուրդների աշխատանքում մասնակցելը և բացատրել, վոր Հոկտեմբերյան հեղափոխության գլխավոր նվաճումը՝ դա բանվորների և գյուղացիների իրավունքն է՝ կառավարել իրենց յերկիրը:

## II Թ Ե մ ա. — ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՒԲ

(16 ժամ)

Կոնկրետ որինակներով ցույց տալ բանվորների գրությունը խորհրդային ֆաբրիկաներում և գործարաններում. յոթնամյա բանվորական որ, աշխատավարձի աճում, աշխատանքի պաշտպանությունը, արձակուրդ յուրաքանչյուր տարին մի անգամ, սոցիալական ապահովագրում, բժշկական ոգնություն, հանգստյան տներ ու սա-

նատորիաներ հասարակական մտունդ, բանվորական նոր տներ ու շեներ: Համեմատության համար որինակներ բերել բանվորների գրությունից նախահեղափոխական ուսուսական ֆաբրիկայից և (մասնավորապես Ադրբեջանում) կապիտալիստական յերկրների ժամանակակից ֆաբրիկայից, ցայտուն որինակներով ցույց տալ կապիտալիստական շահագործման պատկերը:

Կոնկրետ որինակներով ցույց տալ կոլխոզում յեղած գյուղացիների գրությունը. խորհրդային իշխանություն կողմից ցույց տված ոգնությունը մեքենաներով, ՄՏԿ, ագրոկայանների կազմակերպումը, ոգնությունը կոլխոզային առևտուրի զարգացման մեջ, պետական հարսությունը կոլխոզային առևտուրի արտանություններ կոլխոզնիկներին կերի անընդհատ պահասացումը, արտանություններ կոլխոզնիկներին և չքավորությանը: Բերքատվության բարձրացումը կոլխոզում և կոլխոզնիկների յեկամտի աճումը: Աշխատանքի թեթեվացումը, աշխատանքի պաշտպանությունը: Հասարակական մտունդ: Կոլխոզնիկ տնտեսական տնտեսության զարգացումը՝ կով, բանջարանոց և այլն: Բժշկական ոգնություն՝ գյուղացիների համար հանգստյան տներ և սանատորիաներ, ոգնություն անաշխատունակներին, գյուղացիներին սանատորիաներ, ոգնություն անաշխատունակներին, Համեմատության շահագործելու բացակայությունը կոլխոզներում: Գյուղացիների գրություն համար որինակներ բերել ցարական Ռուսաստանի Ադրբեջանում) և կաթյունից (մասնավորապես նախահեղափոխական Ադրբեջանում) և կապիտալիստական յերկրների և գաղութներին գյուղացիության ժամանակակից կյանքից: Ցույց տալ, թե գյուղացիներն ինչպես են տանջվել անխուսափելի անբերրիությունից և սովից, ցարական տուրքերից և չինովնիկներից, հողազրկությունից, ձի չունենալուց և կալվածատերերից, բեգերից ու կուլակներին լծից:

Որինակներով ցույց տալ բանվորների և գյուղացիների լուսավորության գործը զարգացումը խորհրդային իշխանության որոք: Բացատրել, վոր խորհրդային իշխանությունը դպրոցներն և լուսավորությունն այլ հիմնարկները ազատել և յեկեղեցական, մզկիթական դեկավարությունից և կրոնական խաբեբայությունը փոխարինել և լուսավորության գործը լայն հիմունքների վրա դնելով:

Որինակներ բերել ցարական Ռուսաստանի բանվորների և գյուղացիների անկուրտուրականությունից (մասնավորապես ազգային շրջաններում և յերկրամասերում), բանվորների և գյուղացիների մեծամասնությունը դպրոցներում չէին սովորում, ամբողջ կյանքում անգրագետ էին մնում: Բանվորների և գյուղացիների յերկխաների միայն չքաղես էլին մնում: Բանվորների և գյուղացիների յերկխաները դանդաղ չէին մասն և կարողացել սովորել դպրոցում: Այդ դպրոցները դանդաղ են յեկեղեցու և մզկիթների ղեկավարության տակ, ուր ուսման տեղ գլուխները լցրել են կրոնով: Բավարար չափով սովորել կարողացել են միայն հարուստների յերկխաները, վորոնց համար գոյություն են ունեցել առանձին դպրոցներ՝ ազնվականական ինստիտուտներ, վաճառականական ուսումնարաններ, հոգևորական դպրոցներ, գիմնազիաներ և այլն:

խորհրդային իշխանություն որոք բոլոր յերկխաներ սովորում են: Չքավորության յերկխաները ոգնություն են ստանում խորհուրդներից և հասարակական կազմակերպությունից: Բարձրագույն դպրոցներում և տեխնիկումներում բանվորների և գյուղացիների յերկխան

ները թողակ են ստանում: Տարեց-տարի աճում է դպրոցների, բան-  
ֆակուլտետների, տեխնիկումների, բարձրագույն դպրոցների, ակումբների և  
գրադարանների քանակը և այլն:

Սորհրդային իշխանության բոլոր որհնքներն ուղղված են բանվոր-  
ների և գյուղացիների ոգտին: Բանվորներն ու գյուղացիներն իրենք  
մասնակցում են որհնքներ կազմելուն, իրենց իրավունքներն ոգտա-  
գործում են խորհրդների, զանազան հասարակական կազմակերպու-  
թյունների աշխատանքներին մասնակցելու, ունեն իրենց տպագրված,  
պատի և բազմատիրած թերթերը:

### III Թ Ե մ ա. — ՀՈՎՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱ- ԽՄԲԵԼ Ե ԲՈՒՈՐ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎՈՐ- ՆԵՐԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆԲԻ ՅԵՎ ՊԱՅԲԱՐԻ ՀԱՄԱՐ, ՀԱՆՈՒՆ ՍՈՑԻԱԼԻՋՄԻ (20 ժամ).

ԽՍՀՄ ուս և մասնավորապես Անդրկովկասում բնակվող ազգություն-  
ների կյանքի որինակներով ցույց տալ այդ ժողովուրդների զրու-  
թյունը ցարական իշխանության որոք. ժողովուրդներին ազգական  
ձանապարհով գրավումն և թալանելը, շահագործման մեծ չափերը,  
վտանգ ժողովուրդների մահացման ելին մատնում, ազգային կուլ-  
տուրայի՝ լեզվի, սովորությունների, գեղարվեստի ճնշումը, ազգու-  
թյուններին միմիանց դեմ գրգռելը, լուսավորության բացակայու-  
թյունը: Դրա հետևանքով վոչ ուս ժողովուրդների աշխատավորների  
զրությունն ավելի ծանր էր, քան թե ուս բանվորների և գյուղա-  
ցիների դությունը: Բացատրել, վոր կապիտալիստները, կալվածա-  
տերերը և բեկերը ձգտել են բաժանել տարբեր ազգությունների աշ-  
խատավորներին նրա համար, վորպեսզի նրանց ավելի հեշտ կերպով  
պահեն հարստահարման մեջ: Ցույց տալ ուղղափառ յեկեղեցու դերը՝  
ազգությունների հարստահարման գործում վոստիկանության հետ  
միատեղ ջարդեր, բուհի մկրտելության, յեկեղեցական տուրքերի որի-  
նակներով և այլն:

Որինակներ բերել ժամանակակից կապիտալիստական յերկրների՝  
Լեհաստանի, Ռուսիայի ազգային ճնշումներից, դեպի նեգրերը և  
ուրիշներն ունեցած վերաբերմունքից:

Բացատրել, վոր բոլոր ազգությունների աշխատավորների շահերը  
միատեսակ են և կայանում են նրանում, վոր տապալին կապիտալիստ-  
ների և կալվածատերերի իշխանությունը և նոր կյանք կառուցեն  
առանց հարստահարման, վորը կարելի յե կատարել միայն բոլոր ազ-  
գությունների աշխատավորների միատեղ պայքարով և աշխատանքով:

Ցույց տալ, վոր Սորհրդային իշխանությունը բոլոր ազգություն-  
ների աշխատավորներին պահանջել և հավասար իրավունքներով և հո-  
գում է այն մասին, վորպեսզի վոչնչացնի ազգային փոքրամասնու-  
թյունների տնտեսական և կուլտուրական հետամնացությունը: Յերե-  
խաներին ավելի մոտիկ և հայտնի նորակառույցների որինակներ բե-  
րել ազգային շրջաններից (որինակ՝ Թուրքսիբ, Կարագանդա, ՋՍԳԵՍ,  
Գյանջայի մանվածա-ջուլհակային գործարանը և ուրիշները):

Ցույց տալ կուլտուրայի աճումը Սորհրդային Ազգությունում, վոր-  
պես ազգությունների աշխատավորության կուլտուրայի աճման որի-  
նակ Սորհրդային իշխանության որոք՝ գրագիտության աճումը լատի-  
նական այբուբենի մուծումը, մայրենի լեզվով դպրոցներ և այլն:

Որինակներով ցույց տալ բոլոր դավանությունների և կրոնների  
հոգեվորականության պայքարն ազգությունների իրավահավասարու-  
թյան դեմ:

Տարբեր ազգությունների դպրոցականները և պիոներները միմի-  
տնց հետ կապ են հաստատում: Դպրոցականները կապ են հաստատում  
նաև այլ յերկրների մանկական կազմակերպությունների հետ:

Բացատրել, վոր ԽՍՀՄ աշխատավորներն ամբողջ աշխարհի բան-  
վորների և գյուղացիների բարեկամներն են: Դրա հետ կապված բացա-  
տրել մայիս 1-ի միջազգային որվա նշանակությունը:

### IV Թ Ե մ ա. — ԱՇԽԱՏԱՎՈՐ ԿԱՆԱՆՑ ՅԵՎ ՅԵՐԵՍԱՆԵՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒ- ԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ (14 ժամ)

Նկարագրել կնոջ—բանվորուհու և գեղջկուհու դրությունը նախ քան  
հեղափոխությունը, կանանց պակաս աշխատավարձը տղամարդուն հա-  
վասար աշխատանքի համար, առողջության համար վնասակար և ուժից  
վեր աշխատանքներ, յերեխաներին խնամելու անհնարելիությունը,  
ծանր աշխատանքն ընտանիքում, գեղջկուհու ծանր աշխատանքը:

Որինակներով ցույց տալ, վոր աշխատավոր կինն ավելի իրավա-  
գուրկ է յեղել քան տղամարդը. սովորող կանանց սակավությունը,  
կրոնին ավելի յենթարկվելը, սովորությունների վերավորական ընույ-  
թը, դպրոցական հիմնարկներում սովորելու և հասարակական գործու-  
նեության հնարավորության արգելումը, կնոջ անիրավահավասար  
զրությունն ընտանիքում, կենցաղում:

Ցույց տալ թուրք կնոջ բացառիկ ծանր դրությունը: «Բյարին»-ով  
նրան ծախում ելին ապագա ամուսնուն, հետո նա մեխվում էր ընտանի  
ոջախին, որորոցին, անասուններին: Կրոնն ու մուլաները նրան ներշն-  
չում ելին վոր նա կիսամարդ է, վոր իրավունք չունի վոչ տղամարդ-  
կանց հետ խոսելու և վոչ էլ նրանց իր դեմքը ցույց տալու: Նա իր  
ամուսնու ստրկուհին էր: Որինքը պաշտպանում էր տղամարդու իրա-  
վունքները և նա վոչ մի տեղ իր համար հենարան և պաշտպան չէր  
գտնում:

Ազգությանի որինակի վրա ցույց տալ, թե Սորհրդային իշխանու-  
թյունն ինչպես է վոչնչացրել կնոջ իրավազրկությունը. կնոջ համար  
կատարյալ մատչելիություն և ստեղծել ուսումնալ ասպարիզում, հասա-  
րակական աշխատանքում և տրտադրության մեջ աշխատելու գործում:  
Կանանց աշխատանքի և մայրության պաշտպանությունը: Որինակ-  
ներով ցույց տալ, թե ինչպես է աճում կնոջ մասնակցությունը հա-  
սարակական աշխատանքում, արտադրության մեջ և թշնամիների—  
կուլակների, տերտերների, մուլաների դեմ մղած պայքարում: Որինակ  
ներ բերել ինչպես կնոջը հարստահարությունից ազատագրելու և նոր  
կենցաղ ստեղծելու դեմ տարբեր կրոնների հոգեվորականությունը  
պայքար է մղում:

Որինակներով ցույց տալ, թե խորհրդային իշխանութիւնն ինչպէս և փոխել յերեխաների դրութիւնը: Յերեխաների աշխատանքի և իրավազրկութեան որինակներ բերել ցարական Ռուսաստանից և ուրիշ կապիտալիստական յերկրներէ: Խորհրդային իշխանութիւնն արգելել և յերեխաների աշխատանքի գործադրումը: Յերեխաների շահագործման փոխարեն խորհրդային իշխանութիւնը մտցրել և ընդհանուր պարտադիր ուսում պոլիտեխնիկ դպրոցում, ուր ուսուցումը միացված է յերեխաների հասարակ-ոգտակար աշխատանքին մասնակցելու հետ: Մանկական անխնամութեան փոխարեն աճում են մանկական հիմնարկները՝ մսուրներ, հրապարակներ, ոչխարներ: Խորհրդային իշխանութիւնը վոչնչացրել է յերեխաների անխնամութիւնը:

Յերեխաներն ունեն իրենց կազմակերպութիւնները—հոկտեմբերիկներ և պիոներներ: Յերեխաներն իրենք են մասնակցում յերեխաների կենցաղի բարելավման պայքարին և ոգնում են կանանց ազատագրման գործին:

### V Թ Ե Վ ա—ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ—ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈՒՍՈՒ ԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ (14 ժամ)

ԽՍՀՄ բանվորներն ու գյուղացիներն անդադրում պետք է հոգան Հոկտեմբերյան հեղափոխութեան նվաճումների պաշտպանութեան համար: Տապալված կապիտալիստներն ու կալվածատերերը միջոցներ են ձեռք առել և առնում են խորհրդային իշխանութիւնը խորտակելու և վերագործնելու իրենց տիրապետութիւնը: Իրանում նրանց ոգնում են ուրիշ յերկրների կապիտալիստներն ու կալվածատերերը, վորոնցով շրջապատված է մեր յերկիրը:

Կապիտալիստների առաջին զրոհը Խորհրդային յերկրի վրա յեղել է Հոկտեմբերյան հեղափոխութիւնից անմիջապէս հետո և շարունակվել է 3 տարի: Կապիտալիստներից և կալվածատերերից պաշտպանվելու համար կազմակերպվեց Կարմիր բանակ, վորը 3 տարվա ընթացքում հերոսաբար պայքարել է խորհրդների համար և հաղթանակել է ռուս և օտար յերկրյա կապիտալիստների բանակներին: Որինակներ բերել Կարմիր բանակի և Կարմիր նավատորմի հերոսական մարտերից (Լենինգրադի և Պերեկոպի մոտ և ուրիշները) Կարմիր բանակի հերոս ղեկավարներնից—Ստալին, Վորոշիլով, Բուդյոնի, Ֆրունզե, Բլյուխեր:

Ֆրանսիական նավաստիների, Մարտի գլխավորութեամբ, ապստամբութեան որինակով բացատրել, վոր կապիտալիստների դեմ պայքարելիս են մեզ ոգնել են օտար յերկրյա բանվորները:

Կարմիր բանակի կյանքի նկարագրութիւնների և որինակների հիման վրա բացատրել, վոր դա—աշխատավորների բանակն է, վորի մեջ շահագործողները չեն ընդունվում, վոր կարմիր բանակային լինելը մեծ պատիվ և մեծ պարտականութիւն է ԽՍՀՄ և ամբողջ աշխարհի աշխատավորութեան հանդէպ:

Որինակներ բերել, թե կարմիր բանակայիններն ինչպէս են սովորում ռազմական գործը, թե՛ նրանք ինչպէս են մասնակցում յերկրի

տնտեսական և հասարակական կյանքին: Որինակներով ցույց տալ, վոր մարտիկներ պատրաստելու հետ միաժամանակ Կարմիր բանակը ժողովրդական տնտեսութեան համար պատրաստում է մասնագետներ, տրակտորիստներ, մանտյորներ, տեխնիկներ և ուրիշներ:

Բացատրել, վոր մեր յերկրի բոլոր աշխատավորները պետք է օգնեն Կարմիր բանակին, հարձակումից պաշտպանելու խորհուրդներն յերկիրը, վորը պատրաստում են կապիտալիստները: Դրա հետ ըր յերկիրը, վորը պատրաստում են կապիտալիստները: Դրա հետ կապված բացատրել նաև ամեն տարի Կարմիր բանակի համար կապված բացատրել նաև ամեն տարի Կարմիր բանակի համար կապ են պահպանում Կարմիր բանակի և Կարմիր նավատորմի հետ, նրանք սովորում են պատրաստ լինելու յերկրի պաշտպանութեանը:

## ՅԵՐՐՈՐԴ ԽՄԲԱԿ

### I Թ Ե մ ա. — ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԵՂԱՓՈՒՍԱ- ԿԱՆ ՊԱՅԲԱՐԸ ՄԻՆՉԵՎ 1905 ԹԻՎԸ. (24 ժամ)

1. Գյուղացիների դուրսընթացը նորստիքական իրավունքի ժամանակ.— Կարվածատիրական ազարակի, ճորտատիրական գյուղի, գյուղացիների իրավազրկության և կալվածատերերի կամայականության պատկերներ: Թագավորի իշխանությունը՝ չինովնիկներ, վոստիկաններ, տերտերներ (մոլլաներ), զորք, դատարան, բանտ, կապանք, տաժանակիր աշխատանք:

Յեկեղեցու և մզկիթի հատուկ դերը գյուղացիության հոգեպես ստրկացնելու գործում: Յեկեղեցու դերը վորպիս շահագործողի, հարկեր ցարական ոռճիկ, ճորտերի շահագործում:

Գյուղացիների փախուստը և նրանց պայքարը կալվածատերերի դեմ: Բերել պուզաչեվյան շարժման որինակներից: Գյուղացիների անկազմակերպվածությունը, բաժան-բաժան յեղած լինելը, տգիտությունը — վորպես գյուղացիական շարժումների անխուսափելի պարտություն պատճառներ: Գյուղացիների հաղթանակի անհնարինությունը առանց բանվոր դասակարգի հեղափոխական ղեկավարություն:

Կովկասի և միջին Ասիայի գրավման պատկերներ: Գրավված տերիտորիաների ժողովուրդների ստրկացումը և ցարական կառավարության գաղութայնացման քաղաքականությունը: Ազգությունների աշխատավորության դրությունը ցարական լծի տակ և պայքարն ընդդեմ ուսական ցարիզմի: Որինակներ բերել կովկասյան լեռնականները պայքարից և 1841 թ. Գուրիայի ապստամբությունից: Ցարական դատաստանը ցարիզմի կողմից աշխատավորներին լուրջացնելու համար ազգությունների միջև թշնամանք սերմանելը: Ազգային յերկպառակություններ սերմանելու մեջ հոգևորականության (տերտերների, մոլլաների և այլոց) ակտիվ դերը:

2. ճորտատիրական իրավունքի վերացումը.— XIX դարում ֆարբիաների և գործարանների յերևան գալը և գյուղացիական շարժումների աճումը վորպես ճորտատիրական իրավունքի վերացման պատճառ: Ճորտատիրության վերացման փոխարեն գյուղացիության խափելը: Կալվածատերերի և կապիտալիստների շահը 1861 թ. ռեֆորմից: (Գյուղացիների դրությունը ճորտատիրական իրավունքը վերացնելուց հետո):

Գյուղացիական շարժումները 1861 թվի սրենքի ստրկացնող պայմանների դեմ: Գյուղացիության շերտավորումը՝ կուլակների և չքավորների: Գյուղացիների քաղաք գնալը ֆարբիկաններում և գործարաններ

րում աշխատելու համար: Ծնշված ազգությունների գյուղացիության առանձնապես ծանր դրությունը, գյուղացիական ռեֆորմից հետո (Անդրկովկասի որինակով):

3. Բանվոր դասակարգի դուրսընթացը (Մարգովյան մանուֆակտուրայի որինակի հիման վրա).— Բանվորների պայքարը կապիտալիստների դեմ իրենց դրությունը լավացնելու համար:

4. Բանվոր դասակարգի կուսակցության ստեղծումը.— Առաջին բանվորական կազմակերպությունները Ստեպան Սալտուրինի բանվորական միություն որինակի վրա (1878-2879 թ. թ.):

Բանվորական խմբակները և նրանց կազմակերպում և կուսակցություն (1898-99 թ. թ.): Նման խմբակների առաջնալը Բազմում և Թիֆլիսում, նրանց կողմից բանվորական շարժման ղեկավարելը: Ընկ. Ստալինի դերը Թիֆլիսի հեղափոխական խմբակներում և կազմակերպություններում 1897—1898 թվականներին: Այն ժամանակվա բանվորական շարժման պատկերը:

Բանվորական կուսակցության նպատակները ու խնդիրները. կապիտալիստների և կալվածատերերի իշխանության տապալումը, բանվորների և գյուղացիների մասսայական հեղափոխության ճանապարհով, աշխատավոր գյուղացիության վրա հիմնվող բանվոր դասակարգի իշխանության հաստատումը, սոցիալիզմի կառուցումը:

5. Մասնայական բանվորական շարժումը կուսակցության ղեկավարությամբ XIX յեկ XX դարերի սահմանագծում.— կուսակցական պրոպագանդայի և ագիտացիայի որինակներ: 1898—1903 թ. մասսայական բանվորական շարժումներով և կուսակցության դերը նրանց մեջ 1902 թ. որուխովյան պաշտպանությունը (обуховская оборона): 1902 թվին Ռաստովի գործադուլը: 1903 թ. Բազմի ընդհանուր գործադուլը: 1901 թ. գյուղացիական շարժումներից պատկերներ: Ցարական կառավարության պայքարը կուսակցության դեմ. Լենինի ձերբակալումն ու աքսորը (1895 թ.), պրովակացիաներ վոստիկանության և յեկեղեցական կազմակերպությունների միջոցով, անտիսիմիտիզմի դարգացումը, Ստալինի ձերբակալումն ու աքսորումը (1902—1903 թ. թ.):

### II. Թ Ե մ ա. — 1905 ԹՎԻ ՀԵՂԱՓՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ (12 ժամ):

Յապոնական պատերազմը: Հեղափոխության սկիզբը—1905 թվի հունվարի 9-ը: Մասսայական գործադուլները հունվարին— փետրվարին: «Պոտյոմկին» զրահանավի ապստամբությունը: 1905 թ. ամառվա գյուղացիական ապստամբությունները: Բոյլշևիկները— հեղափոխության ղեկավարներ: Նրանց լողունները— միապետության տապալումը, ազատություն բանվորների և գյուղացիների համար, 8 ժամյա բանվորական օր, հողը գյուղացիներին հանձնել առանց հետգնման: Հոկտեմբերյան գործադուլը: Պետերբուրգյան խորհրդի կազմակերպումը և բոյլշևիկների ղեկավարությամբ զինված ապստամբություն պատրաստվելը: Լենինի դերը: Ցարական իշխանության Պայքարը հեղափոխության դեմ. դատաստան գործի ողնությունը, «սև հարյուրյակի» կազմակերպումը և նրա արարքները, յեկեղեցու դերը:

Իեկտեմբերյան զինված ապստամբությունը Մոսկվայում և ուրիշ վայրերում: Բոյլշևիկյան ղեկավարության դերը: Հեռուսային պայքարի

որինաճներ, բարրեկազները Պրեսնյայում, մեքենավար Ուխտոմսկին: 1906 թ. գարնան գյուղացիական ապստամբությունները: 1905 թ. հեղափոխությունը Անդրկովկասում վորպես ուսական հեղափոխություն բաղկացուցիչ մասը: Հեղափոխական դեպքերը Անդրկովկասում, հունվարի 9-ի արձագանքները, հոկտեմբերյան դեպքերը Թիֆլիսում և Բագվում: Դեկտեմբերյան շարժումները Վրաստանում: Գյուղացիական շարժումների պատկերները Անդրկովկասում:

Հեղափոխության պարտությունը պատճառները. ոտարյերկրյա կապիտալիստների կողմից ցարական կառավարության ոգնելը. բանվորների և գյուղացիների դաշինքի անբավարար լինելը, վորը մասամբ արտահայտվել է գյուղացիական շարժման բանվորական ակիբից հետ մնալու մեջ, գյուղացիական շարժման անկազմակերպվածությունը, ցրվածությունը:

Ցարական դատաստանը հեղափոխությունից հետո: 1905 թ. հեղափոխությունն ապահովել է 1917 թ. հոկտեմբերի հաղթանակը: 1905 թվականի հեղափոխությունը բանվորներին ու գյուղացիներին սովորեցրել է կոմունիստական կուսակցության ղեկավարության տակ սերտ դաշինքի անհրաժեշտությունը, կապիտալիստները և կալվածատերերի դեմ պայքարելու գործում:

Հեղափոխական նոր վերելքը բոլշևիկների ղեկավարությամբ: «Պրավդա» թերթի դերը: Լենայի զնդակահարությունը: Բոլշևիկների լուրջնազները:

II Թ Ե մ ա — ՀՈՎՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈՒՄԻԹՅՈՒՆԸ (18 ժամ)

1. Համալսարանային պատերազմ. — Պատերազմի նվաճողական դերը: Յեկեղեցու դերը պատերազմում: Բոլշևիկները պայքարը պատերազմի դեմ և ցարիզմի դատաստանը բոլշևիկների նկատմամբ:

Տնտեսության քայքայումը և աշխատավորության դրության վատանալը: 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը և միապետության տապալումը: Կապիտալիստների և կալվածատերերի ժամանակավոր կառավարությունը փոխարինում է միապետական թագավորական իշխանությունը: Ազատության խոստումներով ժողովուրդին խափելու փորձը:

2. Հոկտեմբերյան հեղափոխությունը. — խորհուրդների կազմակերպումը, կապիտալիստների և կալվածատերերի դեմ պայքարելու համար:

Լենինի գալուստը և նրա լոզունգները. իշխանությունը խորհուրդներին, պատերազմի դադարեցնելը, հողը գյուղացիներին հանձնել, բանվորական կանտոն արգյունաբերության վրա: Բուրժուական տերրորը ընդդեմ բոլշևիկների: Զինված ապստամբությունը հոկտեմբերին: Հոկտեմբերյան մարտի պատկերները: խորհուրդների համազումարը և նրա վորոշումները խաղաղություն և պատերազմի մասին:

խորհրդային կառավարության ընտրելը Լենինի ղլխավորությամբ. Թուսաստանը խորհրդային յերկիր հայտարարելը և խորհրդային իշխանության հայտարարելը:

Բագվի պրոլետարատի պայքարը խորհրդային իշխանության համար: Բոլշևիկների դերը Բագվի խորհրդում. իշխանության գրա-

